ՆԱԽԱԳԻԾ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

«____» _________________ 2015թ. N ______-Ն

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերքներ վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N 49-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում և 1-ին կետում «մթերքներ» բառը փոխարինել «հումք» բառով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ ամսվա 15-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն ներկայացնել ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցում ստանալու նպատակով դիմած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ցանկը, իսկ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երրորդ ամսվա 1-ը՝ փաստացի իրականացված փոխհատուցումների վերաբերյալ տեղեկությունները.».

3) որոշման 3-րդ կետում «տվյալ եռամսյակում» բառերը փոխարինել «տվյալ հաշվետու ժամանակաշրջանում» բառերով.

4) որոշման հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հարկ վճարողներին առաջին անգամ փոխհատուցում տրամադրվում է հունվար, փետրվար և մարտ ամիսների արդյունքներով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի ________________ _____-ի
N _______-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի փետրվարի 12-ի
N 49-Ն որոշման

# ԿԱՐԳ
# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված արտադրատեսակների իրացումից ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսացող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ` ԱԱՀ վճարողներ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե վճարած ավելացված արժեքի հարկի (այսուհետ` ԱԱՀ) գումարների փոխհատուցման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ոգելից խմիչքներ, ծխախոտ, ալյուր (հացահատիկներից), հաց, լավաշ, ալյուրի թեփ և այլ մշակված հացահատիկներ (թեփահանած, տափակեցրած, փաթիլների վերածած, ծեծած, մանրաձավարի տեսքով կամ մանրատած) արտադրող հարկ վճարողների վրա, ինչպես նաև գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ միաժամանակ այլ գործունեություն իրականացնող հարկ վճարողների վրա, բացառությամբ ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող), ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող, առևտրի հարկով և (կամ) հաստատագրված վճարներով հարկվող գործունեության իրականացման, ինչպես նաև հիմնական միջոցների օտարման դեպքերի:

3. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են`

1) ***ԱԱՀ-ի գումարի փոխհատուցում***` գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված արտադրատեսակների իրացումից բյուջե վճարված ԱԱՀ-ի գումարի չափով ԱԱՀ վճարողներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացում.

2) ***ԱԱՀ-ի գումարի փոխհատուցման միջոցառման մասնակից***` ԱԱՀ-ի գումարի փոխհատուցմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմին` Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

գյուղատնտեսության նախարարությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում բացառապես գյուղատնտեսական հումք վերամշակող ու վերամշակումից ստացված արտադրատեսակները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքներում իրացնող ԱԱՀ վճարողները: Անկախ սույն ենթակետի դրույթներից, փոխհատուցման միջոցառման մասնակից կարող է լինել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ միաժամանակ ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող), ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող, առևտրի հարկով և (կամ) հաստատագրված վճարներով հարկվող գործունեություններ իրականացնող, ինչպես նաև հիմնական միջոցներ օտարած հարկ վճարողները.

3) ***գյուղատնտեսական հումքի վերամշակում***՝ անմիջականորեն գյուղատնտեսական հումքի վերամշակման տեխնոլոգիական գործընթաց, որի արդյունքում զգալիորեն փոփոխվում է գյուղատնտեսական հումքի ֆիզիկական և (կամ) քիմիական կազմը, ներառյալ վերամշակման արդյունքում ստացվող կողմնակի արտադրատեսակները՝ մարդկանց կողմից սպառման համար չնախատեսված:

## II. ԱԱՀ-Ի ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Փոխհատուցման տրամադրման հաշվետու ժամանակաշրջան է համարվում ամսական ԱԱՀ վճարողների համար՝ ամիսը, եռամսյակային ԱԱՀ վճարողների համար՝ եռամսյակը, իսկ կիսամյակային ԱԱՀ վճարողների համար՝ կիսամյակը:

5. ԱԱՀ վճարողները՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երկրորդ ամսվա 10-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն են ներկայացնում դիմում՝ ԱԱՀ-ի գումարների փոխհատուցում ստանալու վերաբերյալ և կնքում փոխհատուցում ստանալու մասին համաձայնագիր՝ տվյալ տարվա համար: Դիմումում պետք է նշվեն հարկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), հաշվառման համարը, գործունեության իրականացման հասցեն, գործունեության տեսակը, արտադրվող ապրանքախմբի (ապրանքախմբերի) անվանումը, որոնց կապակցությամբ անհրաժեշտ է կատարել ԱԱՀ-ի գումարների փոխհատուցում, ինչպես նաև տվյալ պահին փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարի չափը: Դիմումին պետք է կցվեն՝

1) պետական գրանցման (հաշվառման) վկայականի պատճենը (ներկայացվում է միայն առաջին անգամ փոխհատուցում ստանալու նպատակով դիմելիս).

2) տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկը՝ կնքված հարկային մարմնի կնիքով.

3) ԱԱՀ-ի վճարումը հավաստող փաստաթղթերը.

4) հայտարարություն՝ սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանները բավարարելու մասին.

5) սույն կարգի 13-րդ կետում նշված դեպքերում՝ հարկային մարմնի կողմից կազմված տեղեկանքը:

6. Ներկայացված փաստաթղթերը ենթակա չեն վերադարձման:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո, առկա տվյալների հետ համաձայն լինելու դեպքում, ԱԱՀ-ի գումարի փոխհատուցման նպատակով տասնհինգօրյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում համապատասխան բյուջետային ֆինանսավորման մասին հայտ՝ տվյալ տարվա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով այդ նպատակով նախատեսված միջոցների հաշվին փոխհատուցման գումարները վճարելու համար:

8. Սույն կարգի 5-րդ կետում նշված փաստաթղթերը թերի ներկայացվելու, ինչպես նաև փոխհատուցման պահանջը հիմնավորված չլինելու, այդ թվում՝ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը վճարված չլինելու կամ մասնակի վճարված լինելու դեպքերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, դրանք ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում, դիմողին գրավոր հայտնում է դրա մասին: Դրանից հետո դիմողն իրավունք ունի սահմանված կարգով ներկայացնելու նոր դիմում:

9. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված ժամկետից հետո, բայց ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը, ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրվում և փոխհատուցումն իրականացվում է առաջիկա հաշվետու ժամանակաշրջանի համար սահմանված փոխհատուցումների իրականացման ժամկետում:

10. Եթե սույն կարգով նախատեսված փոխհատուցումը ստանալուց հետո հարկային մարմին է ներկայացվում փոխհատուցման ստացման ժամանակահատվածին վերաբերող ԱԱՀ-ի ճշտված հաշվարկ (ամսական, եռամսյակային կամ կիսամյակային) կամ ստուգման արդյունքում փոխվում է հարկային մարմին ներկայացված հաշվարկով հայտարարագրված բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը, ինչի արդյունքում՝

1) համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով նախկինում հայտարարագրված բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորությունը նվազում է փոխհատուցված գումարից, ապա փաստացի փոխհատուցված գումարի և ԱԱՀ-ի գծով ճշտված հարկային պարտավորության տարբերության չափով պակասեցվում է առաջիկա հաշվետու ժամանակաշրջանում (ժամանակաշրջաններում) փոխհատուցման ենթակա գումարի չափը, իսկ փոխհատուցումը դադարեցված լինելու դեպքում՝ ենթակա է հարկ վճարողի կողմից վերադարձման պետական բյուջե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից ծանուցումը ներկայացվելուց տասնօրյա ժամկետում.

2) համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով նախկինում հայտարարագրված բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորությունն ավելանում է փոխհատուցված գումարից, ապա

կատարվում է փոխատուցվող գումարի չափի վերահաշվարկ (բացառությամբ ստուգման արդյունքում ԱԱՀ-ի պարտավորության ավելացման), որը վճարվում է առաջիկա հաշվետու ժամանակաշրջանում (ժամանակաշրջաններում) փոխատուցման ենթակա գումարի հետ միաժամանակ, իսկ փոխատուցումը դադարեցված լինելու դեպքում՝ վճարվում է հարկ վճարողին մեկամսյա ժամկետում:

11. Սույն կարգի 5-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթերում կեղծ տեղեկություններ ներառելու դեպքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը իրավասու է դադարեցնել փոխատուցումը: Փոխատուցումը դադարեցվում է նաև հարկ վճարողի կողմից սույն կարգի 12-րդ կետով նախատեսված դեպքերում հարկային մարմին դիմում չներկայացնելու կամ սխալ տեղեկություններ ներկայացնելու համար:

12. Հարկ վճարողի կողմից փոխատուցման ժամանակաշրջանին վերաբերող հաշվետու ժամանակաշրջանում «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանային չափերը գերազանցելու և (կամ) հիմնական միջոցների օտարման դեպքերում, դիմում է հարկային մարմնին՝ ըստ գործունեության տեսակների ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունների և բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների ուսումնասիրություն անցկացնելու նպատակով:

13. Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը հարկ վճարողի մոտ իրականացնում է ուսումնասիրություն և կազմում տեղեկանք՝ ըստ գործունեության տեսակների ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունների և բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների մեծությունների վերաբերյալ:

14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը, ըստ անհրաժեշտության, օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունների և հաշվարկված ու բյուջե վճարված ԱԱՀ-ի գումարների ուսումնասիրություններ նաև փոխատուցում ստացող այլ հարկ վճարողների մոտ և արդյունքները ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

15. Սույն կարգի 5-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը տարածվում է 2015 թվականի ապրիլի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով փոխատուցումների տրամադրման գործընթացի վրա: Հարկ վճարողների կողմից հունվար, փետրվար և մարտ ամիսների ընթացքում ԱԱՀ-ով հարկվող այլ գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն կարգով սահմանված փաստաթղթերի հետ միաժամանակ, ներկայացվում է նաև հարկային մարմնի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանք՝ ըստ գործունեության տեսակների՝ ԱԱՀ-ով հարկվող

շրջանառությունների և բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների մեծությունների վերաբերյալ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

*Անհրաժեշտությունը*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է որոշ ժամկետների փոփոխության, գյուղատնտեսական մթերք բառը հումք բառով փոխարինման, վերամշակում հասկացության ճշտման անհրաժեշտությամբ: Նաև առաջարկվում է գյուղատնտեսական հումք վերամշակող հարկ վճարողներ համարել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ միաժամանակ ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող), առևտրի հարկով և (կամ) հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն իրականացնող հարկատուներին, ինչպես նաև ճշտել փոխհատուցման ժամանակաշրջանին վերաբերող հաշվետու ժամանակաշրջանում «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներով սահմանված սահմանային չափերը գերազանցելու, և (կամ) հիմնական միջոցների օտարման դեպքերում հարկատուի գործողությունները:

*Կարգավորման նպատակը և բնույթը*

Ներկայացված նախագծի նպատակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գյուղատնտեսական հումք վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին գյուղատնտեսական արտադրատեսակների արտադրության խթանումն է:

*Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք*

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից:

*Ակնկալվող արդյունքները*

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումից ակնկալվում է

պետության կողմից խթանումային միջոցառումների կիրառմամբ գյուղատնտեսական հումք վերամշակողների ակտիվության և զարգացման համար նախադրյալների ստեղծում:

***<u>Այլ տեղեկություններ</u>***

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է հանրային քննարկումների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ
## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ չեն նախատեսվում:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ — Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Որոշման նախագծի անվանումը`**
«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

**Նախագիծը ներկայացնողը`**
ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

**ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել`**

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
4. ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայություն

**Նախագիծը պատրաստողը`**
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

____________________ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ
(ստորագրությունը)

«____»____________ 2015թ.